

## ՄԻ ՓՈՐՉ ՓԸՈՒՍՏ ՈՂԲԵՐԳՈՒԹԵՆՆ ՀԻՄՆԵ- ԿԱՆ ՓԻՂ. ԳՆՂԱՓՈՐՆԵՐԸ ՀՆՍԿԱՆՍԼՈՒ

(Գերմաներէն ընդիրը կարգացուած Մարբուրգի ստտուածարան  
ուսանողները ճեմարանական ընկերութեան դահլիճում 1905  
յունուար 10)

Փառուսը համաշխարհային գրականութեան գլուխ գործոց-  
ներէից մէկն է անշուշտ. շատ քիչ անգամ յաջողուել է քաղա-  
քակիրթ մարդկութեան ոգուն երգել այնպէս գերազանց թա-  
փով իւր իսկ վիշտն ու տանջանքը, իւր մոլեգին ձգտումները,  
յոյսերն ու վերջապէս ակընկալութիւնները: Գէօթէն մի ան-  
գամ ասել է. «Տուէք ինձ մի Աստուած, որ պատմէ, թէ ինչ-  
պէս եմ տանջուում». և Աստուած տուաւ նրան հանճար, որ  
նա երգի քաղաքակիրթ մարդու ներքին աշխարհը իւր բազմա-  
թիւ տեսարաններով:

Համաշխարհային գրականութեան պատմութեանը յայտնի  
են երեք գործեր, որոնց մէջ տանջուող, մաքառող և ձգտող  
մարդկութեան ոգին այնպէս բնորոշ կերպով ներկայացուած է,  
դոքա են, Էսքիլեսի Պրոմէթէոսը, Շէքսպիրի Համլէտը և վեր-  
ջապէս Գէօթէի Փառուսը: Հին դարի յոյն հանճարը բանա-  
ստեղծեց Պրոմէթէոսին, որը իւր դէպի մարդկութիւն տածած  
սիրոյ համար երկնային կրակ գողացաւ և մարդկանց պարգե-  
ւեց. այս յանդուգն գործի համար աստուածները հայր Արա-  
մազդը անհուն զայրոյթով շղթայեց նորան Կովկասեան լեռնե-  
րի ժայռերից մէկի վրայ և ուղարկեց մի անզղ կտցահարելու  
նորա լեարդը, իւր անյատակ տառապանքների մէջ բողբ բար-  
ձաւ հպարտ Պրոմէթէոսը Արամազդի վայրագ բռնակալութեան  
դէմ և յոյս յայտնեց, որ մարդը աստուածային կրակի օգնու-  
թեամբ կարող պիտի լինի մի ճանապարհ դէպի աստուածու-  
թիւնը գտնելու, Արամազդին իւր բարձունքից գահավիժելու  
և իրեն մարդկութեան բարերարին ազատելու: Սա սկիզբն է  
մարդկութեան հոգու մեծ դրամային:

Համկէտում բացւում է մեր առաջ մի ուրիշ տեսարան: Մարդը հանդէս է գալիս այնտեղ բաւականին քաղաքակրթուած, բայց աստուածային իրէախները դեռ չեն յաղթանակել. ամեն տեղ անարդարութիւն է թագաւորում և Համկէտը առաջ է գալիս աշխարհի բնօրէն վրայ և բացազանչում. «Լինել թէ չլինել, այս է ինդիւրը...»: Պէ՞տք է որ ազնիւ մարդը շարունակի իւր գոյութիւնը բաշ տալ այս կեղտոտ աշխարհում, ուր այնչափ ցաւ ու անչափ անարդարութիւն է իշխում. այսպէս խաղում է նա բողբոջ մարդկութեան դերը. բայց իզ՞ուր. Համկէտը անհետանում է, իսկ անարդարութիւնն ինչպէս և արդարութիւնը, գեղեցիկ երազանքները մարդկութեան և աշխարհի կեղտոտ իրականութիւնը շարունակում են մարդկութեան ուղեկցել:

Փառւստի մէջ մարդկութեան ձգտումներն աւելի բուն են. Պրոմէթէոսի գողացած հրկնային կրակը բոլորքում է Փառւստի կրծքում և սպանում է նորան մրկել. Փառւստը սովորել է փրկիստիայութիւն, իրաւաբանութիւն, բժշկութիւն և վերջապէս աստուածաբանութիւն, բայց և այնպէս զգում է իրան տգէտ, մի ողորմելի արարած. նա կամենում է ամբողջ բնութիւնը ըմբռնել. Աստծու վեցօրեայ գործը հասկանալ և կեանքի աղբիւրից վայելել, կարճ. իրեն իբր դերմարդ աստուածութեան մօտեցնել: Պրոմէթէոսն էլ նոյն ակնկալութիւնն ունէր և մենք իմանում ենք, որ Փառւստը համաձայն նոյն ողբերգութեան դէն է ձգում իւր մարմնեղէն պատեանը, ազատւում է այս կեղտոտ աշխարհից և նետւում դէպի հրկնային անմահութիւնը, այսպէս մօտենում է աստուածութեանը: Ձրգտում դէպի կատարելութիւն, դէպի աստուածութիւնը և այդ ձգտման ընթացքը դէպի նպատակակէտը կազմում են կրօնի կորիզը, բայց մենք փորձենք պարզել այն ձգտումն և ոյժը, որը Փառւստին դէպի կատարելութիւն, դէպի փրկութիւն առաջնորդեց:

Ի՞նչպէս փրկուեցաւ Փառւստը. մի ունէ կրօնի կամ աշխարհայեցողութեան օգնութեամբ. բնաւ երբէք. Փառւստի համար այդպիսի հարցեր գոյութիւն չունին. նա ձգտում է ճանաչել միայն կեանքը, մի կեանք շարժուն և գործունեայ և անհուն ձգտումներով. տրամաբանական կլինի հարցնել, ինչպէս էին Փառւստի կեանքն ու ձգտումները, որոնցով նա փրկուեց. այս հարցին պատասխանելու համար պէտք է հետևենք Փառւստի կեանքի ընթացքին համաձայն նոյն ողբերգութեանը:

Փառւստը մի բարեպաշտ բժշկի որդի է, որը նոյնչափ

բարեպաշտ, ինչպէս իւր հայրը, օգնում է նորան նորա բժշկական գործունէութեան մէջ, նա յոյս ունի հաստատ հաւատով, աղօթքով և պահք պահելով հիւանդութիւնները բժշկել: Ֆաուստը երբ երիտասարդ է դառնում, նուիրում է իրան գիտութեան, որը նորա կոյր հաւատքը խախտում է. նորա հոգում առաջ է գալիս մի դատարկութիւն. չնայած որ նա շատ բան է սովորել, բայց բնութեան ոչ մի գաղտնիք չի կարողացել պարզել. թէպէտ չի վախենում ոչ սատանայից և ոչ դժոխքից, բայց ի՞նչ. նա չունի ուրախ սիրտ. ի՞նչ արժէք ունի գիտութիւնը. դորա օգնութեամբ մարդկութիւնը դէպի լաւն ատաղնորդելու միտքը մի խեղճ ցնորք է. «Շունն անգամ չի ուղենայ այսպէս ապրել, ասում է նա, այդ պատճառով ես ինձ մոգութեան եմ նուիրել»: Ընդհանրապէս միշտ կարելի է նկատել, որ այն տեղը, ուր չին հաւատում մի գերերկրային և անձնատրեալ էակի, յառաջ է գալիս այն աշխարհայեացքը, որ իւրաքանչիւր առարկայ բնութեան մէջ մի ոգի է պարունակում. Ֆաուստը կամենում է այդպիսի մի ոգու ոյժի օգնութեամբ բնութեան գաղտնիքները լուծել և ճանաչել այն ոյժը, որը տիեզերքի մէջ գործում է: Այդ պատճառով նա մի կողմն է ձգում իւր գրքերն ու գործիքները և մի մոգական գրքի օգնութեամբ դուրս է կանչում երկրադնդի ոգուն, որը ժամանակի հիւսուած աթոռի վրայ գործում է բնութիւնը իբր հագուստ աստուածութեան. ոգին յայտնում է, բայց Ֆաուստը չի կարող նորան պինդ պահել և ստիպել, որ նա բնութեան գաղտնիքները լուծի. նա աներևոյթանում է թողնելով Ֆաուստին անհուն յուսահատութեան մէջ: Նա չի գտնում և ոչ մի ուրիշ ելք մոլորութեան այս ծովից արտասուզել, քան թոյն ընդունել և անէանալ. բայց զատկական սօնը և հին յիշատակները արգելում են նորան այս վերջին քայլն անել:

Եթէ մենք մի յետահայեաց ակնարկ ձգենք և Ֆաուստի ներքին կեանքի զարգացման ընթացքը մեզ պարզենք, կտեսնենք, թէ ինչպէս նա դուրս է գալիս միջնադարեան կաթոլիկ հաւատի միջոյրտից և սկեպտիք է դառնում. սկզբում գիտութեան ապա կախարդութեան միջոցաւ կամենում է ըմբռնել տիեզերքը. բայց իզո՞ւր. նա բռնում է տիեզերական վշտով: Ով այդպիսի վիճակի մէջ է գտնում, երեք հնարաւորութիւն ունի ազատուելու. ա. մի որևէ նոր աշխարհայեացք ձեռք բերելով, ինչպէս Պօղոս առաքեալը. բ. իրեն ցինիք կեանքի նուիրելով՝ ինչպէս Դօն-ժուանը. գ. ինքնասպան լինելով՝ ինչպէս Վերթերը: Ֆաուստը ուզում է անձնասպան լինել, բայց մի

պատահական հանգամանք նորան խանգարում է. նա կամեցաւ նոր աշխարհայեացք ձեռք բերել. այդ բանը նորան չյաջողուեց. մնում է միայն միջին ճանապարհն ընտրել: Վերջին անգամ փորձում է նա յայտնութեան կրօնի միջոցով ազատուել տիկզերական ցաւից: Յարութեան տօնին գնում է նա ազատ բնութեան մէջ դրօսնելու. գարնանային բնութեան սրբազան ներգաշնակութիւնը լեցնում է նորա հոգին անձկութեամբ դէպի յաւիտենական էակը. բայց այս էլ երկար չի տևում, շուտով չորանում է նորա սրբազան ոգևորութեան աղբիւրը. նա կամենում է նորից խմել այդ աղբիւրից և փորձում է յագեցնել իւր ծարաւը այն աստուածային յայտնութեամբ, որը մենք ստանում ենք նոր Կտակարանի միջոցաւ. «Սկզբանէ էր բանն» պէտք է հասկանալ այս նախադասութիւնը, նա գլուխ է ջարդում և վերջապէս, երբ շատ խորհրդածութիւններից յետոյ գրում է իբր թէ հասկանալով «սկզբանէ էր գործն», զգում ենք, որ յիրաւի նորա հոգու առաջ յայտնութեան ամեն մի աղբիւր խցուած է. նա ոչ թէ ստեղծողին, այլ ստեղծագործութիւնն է կարողանում հասկանալ և իսկզբանէ գոյութիւն ունեցող համարել. և յիրաւի, երբ նա «իսկզբանէ էր բանն» նախադասութիւնը «իսկզբանէ էր գործն» է թարգմանում, հրաժեշտ է տալիս քրիստոնէական յայտնութեան կրօնից: Հէնց այս յարմար ըռպէին մօտենում է բնութեան ոչնչացնող և ժխտող ոգին, որը տիեզերքի բարձրեալ տիրոջից իրաւունք էր ստացել Ֆառուսին մուտրեցնելու:

Ֆառուստը սակայն բնութիւնից բարի մարդ է, նա չի կարող հեշտ մոլորուել և լկտի կեանք վարել, նա աւելի շուտ մահ կընտրէր. ի՞նչու, որովհետև մեր կեանքը ողորմելի մի ոչնչութիւն է, որովհետև բնութեան ոչ մի գաղտնիք չի կարելի լուծել, չի կարելի բնութեան կաթնատու ստինքները գտնել, ծծել, մի խօսքով, որովհետև մենք աւելի շուտ գետին փորող ճճուի ենք նմանում, մինչ աստուածութեան կուզենայինք նմանուել: Բայց փորձիչ աստանան, որ Յոբին և Յիսուսին չկարողացաւ մոլորեցնել, մօտենում է Ֆառուսին և խրախուսում է նորան իւր օգնութեամբ մի նոր կեանք սկսել. նա խոստանում է նորան աշխարհի ամեն վայելք, ամեն պատիւ ու փառք: Ստանան Հին Կտակարանում զրկում է Յովբին ամեն երկրային բարիքից նորան մոլորեցնելու, իսկ Ֆառուսին հակառակը, երկու տարբեր ճանապարհներ դէպի միևնոյն նպատակը: Ֆառուստը համաձայնում է և ասում Վեւ ինչ որ ամբողջ մարդկութեան բաժին է ընկել, կուզեմ իմ ներքին աշխարհում վայելել...

կամ... Թող որ խոր զգայականութեան մէջ մեր բորբոք կրքերը յոգնեցնենք»։ Մեֆիստոֆէլը յաջողում է Ֆաուստին բանականութեան և բարոյականութեան աշխարհից քաշել և ձգել զգայականութեան աշխարհը. այդ յաջողում է նորան, որովհետև միևս աշխարհը Ֆաուստի համար գոյութիւն չունի. «Ձեմ կամենում ոչինչ լսել, թէ արդեօք միևս աշխարհում վերև ու ներքև կայ», ասում է նա, բայց նա վախենում է ծոյլ լինելուց, նա ուզում է անվերջ գործունեայ լինել և յաւիտեանս ձգտել. դէպի Թնչը ձգտել. այդ անհետաքրքիր բան է. նա ուզում է ապրել և այսպէս յանձնում է իրան Մեֆիստոֆէլին. որից յետոյ նա դառնում է մի անբարոյական հսկայ առանց նպատակի և հանգիստ ունենալու, նման այն հեղեղին, որ ժայռից ժայռ շփուելով կատաղօրէն դէպի անդունդն է գահավիժում։ Նորա այդ արտանական գահավիժումին զոհ է գնում ճակատագրօրէն մի խաղաղ ընտանիք։ Թէ Թնչ աշխարհայեացք ունէր այն ժամանակ Ֆաուստը, կարող ենք իմանալ, եթէ ուշադրութեամբ դիտենք այն տեսարանը, որը «Մարթայի պարտէզը» անունն է կրում։ «Հաւատում ես Աստուծուն» հարցնում է Գրէտիէն Ֆաուստին։ Նա պատասխանում է. «Զգացմունքն է ամեն բան»։ մի զգացմունք, որի համաձայն ամբողջ տիեզերքում մի ամենակարող ոյժ կայ, որ անտեսանելի և խորհրդաւոր կերպով հիւսում է, եթէ այդ զգացմունքով մարդու սիրտը լեցուի, նորա համար բախտ, սիրտ, սէր, Աստուած բառերը սինոնիմ կը դառնան. զարմանալի է որ Ֆաուստը այս բառերի կողքին ուրիշ զգացմունք արտայայտող բառեր ինչպէս են. ատելութիւն, նախանձ, վրէժ և այլն չի դնում. որովհետև սա Թնչ խոստովանութիւն է. խեղճ աղջիկը, որ նորա խօսքերից ոչինչ չի հասկանում և կարծում է, որ իրենց տէրտէրն էլ այդպէս մի բան ասել է, նկատում է իրաւամբ, որ նա քրիստոնեայ չէ։ Յիրաւի զգացմունքը դեռ կրօն չէ, այլ նորա էական մասը։ Զգացմունքն ինքնըստինքեան մի պղտոր ովկիանոս է, որի մէջ չի անդրադառնալ և ոչ մի պայծառ աստղ։ «Ո՞վ կարող է նորան անուանել» հարցնում է նա, և կարծում է ոչ ոք. Թնչ խօսք որ բնութեան մէջ գործող ոյժերը անուն չունին. և եթէ մենք այս հատուածը ուշի ուշով քննելու լինենք, կը տեսնենք, որ այստեղ բնութիւնն ու Աստուած այնպիսի գաղափարներ են, որ միմեանց ծածկում են, եթէ ճիշտ է մեր դիտողութիւնը, այն ժամանակ պիտի ասենք, որ այս հատուածը պարունակում է համաստուածական մի դաւանանք։ Խնդրի այսպիսի ըմբռնողութիւնը չի հակասում ամբողջութեանը. եթէ

հարցնենք հիվ է երկրի ոգին կամ հիվ է Մեֆիստոֆէլը, պատասխանը հէնց ինքը Մեֆիստոն է տալիս, երբ նա հաստատում է, որ ինքը ամբողջի մի մասն է, որը ամբողջին տէր է անուանում. և այն տէրը, որը «Prolog im Himmel» կոչուած տեսարանում երևում է, տիեզերքի անձնաւորացումն է միայն, նա, այդ մեծ անձնաւորութիւնը ուղարկում է իւր մի մասին, որ ժխտող բնաւորութիւն ունի — Մեֆիստոֆէլին, Ֆաուստին մոլորեցնելու: Այս մեծ տիրոջ համար բարւոյ և չարի գաղափարները անտարբեր բաներ են, ամեն մի գոյութիւն մի երեւոյթ է, որ բղխում է ամբողջութիւնից. Աստուած-բնութիւնն է այդ ամբողջութիւնը. սատանաները, հրեշտակները, մարդիկն ու ամբողջ կենդանական և անկենդան մեր զգայութեան ենթակայ աշխարհը նորա modi-ներն են: Ֆաուստը բնութիւնից բարի է, իսկ Մեֆիստոֆէլը բնականից չար, իրենց այդպէս լինելը կախուած չէ իրանցից, այլ մեծ—ամբողջից Աստուած-բնութիւնից. նոցանից ոչ մէկը չի կարող իր բնաւորութիւնը փոխել. բայց եթէ Ֆաուստը առաջ բարի էր, այժմ չար, դա մի առժամանակեայ, մի բացառիկ երևոյթ է, առ ժամանակ նա մոլորում է և լսում է սատանային և իւր կրքերին զոհում է Գրէտխէնի մօրը, եղբօրը և իրան Գրէտխէնի համար այն սարսափելի ոլբերգական տեսարանը պատրաստում:

Մինչև այժմ մեր ասածներից ընթերցողը կտեսնի, որ մենք Ֆաուստի ողբերգութեան առաջին մասում իրր հիմնական գաղափար պանթէիզմն ենք նկատում \*). առաջ քան երկրորդ մասին անցնելը մօտից քննենք այդ աշխարհայեացքի մի յատկութիւնն ևս. այդ նորա քարացած լինելն է: Այս աշխարհայեացքի համաձայն զարգացումը և մանաւանդ հոգեկան զարգացումը անհնարին է մտածել. որովհետև Աստուած-բնութիւնը միևնոյնն է սկզբից մինչև յաւիտեան. չէ՞ որ յիմարութիւն կլինէր մտածել, որ Աստուած ինքը զարգանում է. Աստուած-բնութիւնը ունի իւր յաւիտենական օրէնքները, այդ օրէնքից դուրս ինքն էլ չի կարող գալ, իսկ բնութեան երևոյթները պայմանաւորուած են, կախուած Աստուած-բնութիւնից: Այս հայեացքը Սպինոզան մի ժամացոյցի օրինակով մեզ հասկանալի է դարձնում. մի ժամացոյց ունի մի մեքենայ և երբ այդ մեքենան լարուած է, այն ժամանակ կանոնաւոր ընթացքով շարժ-

\*) Ով տարակուսում է, թող կարգայ «Wald und Hölle» կոչուած մօնօղը, ուր Ֆաուստն իր աղօթքն է մրմնջում Աստուած—բնութեանը և ուր նա թուփ, ջուր, օդ, իւր եղբայրներն է համարում, այսպէս նա կհամոզուի, որ Ֆաուստը ա. մասում պանթէիստ—համաստուածեան է:

ւում են ժամացոյցի սլաքները, եթէ մեքենայի տեղը Աստուած-  
րնութիւնը երեւեակայինք և սլաքների տեղը հոգեկան և ֆի-  
զիքական ոյժերը՝ կտանանք տիեզերական շէնքի պատկերը:  
Այս օրինակում հեշտ է տեսնել թէ պանթէիլովը, որ այնչափ  
բանաստեղծներ է ոգևորել, ինչպիսի մի քարացած սիստեմ է:  
Գէօթէն՝ հանճարեղ բանաստեղծը չէր կարող այսպիսի քարացած  
սիստեմի մէջ սահմանափակուել. և յիրաւի Ֆաուստի երկրորդ  
մասում ուրիշ տեսութիւններ են ասպարէզ գալիս:

Այս ողբերգութեան երկրորդ մասում պէտք էր բարոյա-  
պէս ընկած Ֆաուստը վեր կենար և դէպի բարձրագոյն կատա-  
րելութիւն ձգտէր: Եւ ահա լուսանում է, Ֆաուստը, որ իւր խղճի  
չարաչար տանջանքներից հալածուած, խոյս էր տուել հասա-  
րակութիւնից և ազատ բնութեան մէջ ներհնէր, աչքերը բաց  
է անում և արշալոյսի հոյակապ տեսարանի առաջ զմայլում:  
Նա նկատում է, որ անշունչ բնութիւնն անգամ նոր ոյժով դէ-  
պի բարձրագոյն գոյութիւնն է ձգտում. և երբ նա զգում է,  
որ իւր աչքերը արևի փայլը չեն կարող տանել, մարգարէա-  
նում է, որ յաւիտենական ճշմարտութիւնն էլ, եթէ նորան  
գտնել կարելի լինի, կպարզուի մեր առաջ իբրև մի հրեղէն  
ծով և կմրկի մեզ անկատար և խղճուկ մահկանացուներիս. ուս-  
տի աւելի լաւ է աչքերը դէպի երկիր դարձնել և նորա հետ  
աստիճանաբար դէպի այդ անհուն կատարելութիւնը ձգտել:  
Այս միտքը իւր ժամանակին Լէսինգն էլ է արտայայտել հետե-  
ւեալ կերպով «Եթէ Աստուածը իւր աջ ձեռքում յաւիտենա-  
կան ճշմարտութիւնը, իսկ ձախ ձեռքում ծգտումը դէպի այդ  
ճշմարտութիւնը բռնած ունենար և ասէր ինձ. ըստբիբ մէկը  
սոցանից, ես պիտի ծունկ չոքէի նորա աթոռի առաջ և ասէի,  
Տէր, յաւիտենական ճշմարտութիւնը քեզ է վայել, թող մնայ  
քեզ մօտ, ես ուզում եմ ծգտումը դէպի ճշմարտութիւն:  
Բացի դորանից վերոյիշեալ տեսարանը մեզ ոչ թէ նորից Պան-  
թէիզմը, այլ Լայբնիցի մօնատաների վարդապետութիւնն է յի-  
շեցնում. համաձայն այդ ուսման տիեզերքը մի անվերջ, մօնա-  
տաներից կազմուած շղթայ է ներկայացնում. այդ շղթայի  
սկիզբը կազմում է Աստուած, իսկ վերջը (եթէ այդպիսի վերջ  
կարելի է մտածել) անկենդան հիւլէներից ամենամակաւորը.  
Իւրաքանչիւր մօնատա ունի երկու կողմ՝ լուսաւոր և խաւար.  
լուսաւորով նա կարող է պայծառ մտածել. Աստուած մինակ  
մի լուսաւոր կողմ ունի, իսկ միւս մօնատաները աւելի կամ  
նուազ չափով խաւար են. որչափ մի մօնատա պայծառ է, այն-  
քան մօտ է Աստուած-մօնատային, այսպէս Աստուծուց յետոյ

գալիս են հրեշտակները, որոնցից յետոյ մարդը, մարդուն ենթարկուած է կենդանական աշխարհը և վերջապէս գալիս է անկենդան աշխարհը, որը շատ քիչ լուսաւոր կողմ ունի, այս մօնատաների բարձրագոյն նպատակն է դէպի Աստուած-մօնատան ձգտել: Այն համոզմունքը, որ տիեզերքը ընդունակ է դէպի բարձրագոյն կատարելութիւն ձգտելու Գէօթէի կրօնական աշխարհայեցողութեան մէջ մի անդրդուելի դաւանանք է. այսպիսով Ֆաուստի համաստուածութիւնը, թէև անհետևողական, բայց առանձին տեսակի գեղեցկութիւն ու հրապոյր է ստանում:

Բայց, ինչպէս վերևը յայտնել ենք, այսպիսի փիլիսոփայական խորհրդածութիւնները Ֆաուստին չեն գրաւում, դոքա միայն բացառիկ և նշանակութիւն չունեցող երեոյթներ են. նա ապրել է ուզում, կեանքը հիմնովին ճաշակել: Մինչև այժմ նա հասարակ քաղաքացու կեանք է վարել, այժմ ուզում է makrokosmos-ը կամ, ինչպէս Ֆրանսացիին է ասում, grand mond վայելել: Մեֆիստոֆէլը տանում է նորան կայսերական պալատը և ուզում է նորան բարեկենդանի (karuaval) ուրախ խընջոյքներում և ներկայացումներում գինովացնել, նորա յառաջդիմասէր ոգին խեղտել, կամ մեղկացնել. բայց Ֆաուստը չգիտէ յոգնել, մի գործից դէպի միւսն է թոչում և խոստանում է Հելենային և Պարիսին ստուերների աշխարհից կախարդելով դուրս կանչել կայսեր առաջ: Այդ բանը կարող է նա անել mutterների, այսինքն իդէաների օգնութեամբ, որոնք յաւիտենական միայնութեան մէջ անմահ իրենց գոյութիւնն են պահպանում: Յոյն աշխարհի գեղեցկութեան տիպար Հելենայի խուլ արձագանքը միջնադարի հետաքրքրութիւնը դարձնում է դէպի անցեալը, դէպի յունական քաղաքակրթութիւնը: Յայտնի է, որ Պղատոնի քաղաքական իդէալները միջնադարում անգիտակից կերպով իշխում էին. քրիստոնեայ եկեղեցին նորա իդէաների վարդապետութիւնը իւրացրել և իւր կրօնական աշխարհայեցողութեան հետ հիւսել էր (օրինակ. գեղեցիկի, բարւոյ և ճշմարտի իդէաները աշխարհիկ իրականութիւն չունին, այլ վերացական): Եկեղեցին մտածողութեան այս ձևը հաղորդել էր գերման ժողովուրդներին. դորա համար էլ Պղատոնի իդէաների վարդապետութիւնը կամուրջ պիտի լինէր գերման ժողովուրդների կամ նորա ներկայացուցիչ Ֆաուստի համար միջնադարի բոմանտիզմից դուրս գալու և յոյն աշխարհի կլասիցիզմի հետ ծանօթանալու: Այսպէս Ֆաուստը կարող էր Պղատոնի իդէաների օգնութեամբ դուրս

բաշել յոյն աշխարհի գեղեցկութեան իղէալ Հելենային մոռացութեան աշխարհից և կանգնեցնել կայսրի առաջ. բայց անտիք գեղեցկութեան հայեացքը ապշեցնում է Փառուտին, նա գիտովցած յափշտակութեամբ յարձակում է նորա վրայ, նորան տիրանալու. բայց Հելենան անհետանում է թողնելով Փառուտին ուշաթափ դրութեան մէջ, որից յետ նա անդադար երազում է յոյն դեղարուեստասէր ոգու ստեղծած այս գեղեցկութեան տիպարի մասին. Գէօթէն այս տեսարանով ուզում է ասել թէ՛ և բրոպական ազգերի վերածնութեան աւետարեբը յունական արուեստն է, նորան հետևում է գիտութիւնը:

Երկրորդ գործողութեան մէջ իմանում ենք, որ Փառուտի հին ֆամուլուս Վազները խորասուզուելով լուրջ գիտական հետազոտութիւնների մէջ, յաջողում է մի մարդուկ ստեղծել Հոմուրուլուս անունով: Այս մարդուկը յունական դեռ անկատար քաղաքակրթութեան արդիւնքն է: Երբ գերման ժողովրդներին յունական քաղաքակրթութիւնը բաժին ընկաւ, յառաջ եկաւ մի նոր քաղաքակրթութիւն, մի նոր մարդ. սա ինքն է հումանիտա Հումուրուլուսը, որը Մեֆիստոֆէլին հօրեղբորորդի է անուանում, որովհետև Մեֆիստոֆէլը որդի է հեթանոս գերմանների կուլտուրային, իսկ Հումուրուլուսը՝ հեթանոս Հելլէնների: Ամեն ինչ որ միջնադարում գոյութիւն ունէր հպատակում էր միջնադարեան ոգուն Մեֆիստոյին, բայց Հումուրուլուսը իւր գոյութիւնը պարտական է Յունաստանին. դորա համար նա չի հնազանդում Մեֆիստոյին, այլ ձգտում է դէպի Յունաստան և Փառուտը, որը դեռ շարունակ յոյնի իղէալ-գեղեցկութեան մասին երազում էր, հետևում է նորան գեղեցիկ Հելենային գտնելու և նորա հետ միանալու նպատակով: Այսպէս միջնադարեան ոգու Մեֆիստոյի աղղեցութիւնը Փառուտի վրայ նուազում է, դորա փոխարէն յունական արուեստն ու փիլիսոփայութիւնը քաշում են Փառուտին իրենց յետևից:

Փառուտը դիմում է դէպի Յունաստան և այսպէս կոչուած կլասիքական Վալպուրգեանախտում որոնում Հելենային. բազմաստուածեան Յունաստանում դառնում է Փառուտը ինքն էլ պօլինթէիստ, որովհետև այդպիսով կարելի է միայն յոյն արուեստը, աշխարհայեցողութիւնը և առհասարակ քաղաքակրթութիւնը սիրել, հասկանալ և գնահատել: Բազմաստուածեան դառնալով նա գրաւում է աստուածների սիրտը, որը նորան օգնում են յոյն կանացի գեղեցկութեան բարձրագոյն ներկայացուցչին գտնելու և նորա հետ միանալու: Փառուտն ու Հելենան իրենց զուգաւորութեան երջանիկ յափշտակութեան մէջ

մի երեխայ են ունենում էւֆօրիոն անունով, որը Բայրօնի հետ կարելի է համեմատել. այս նշանակում է, որ յոյն և գերման ժողովրդները այսպիսի մօտիկ շփումից ծնւում են Բայրօնի նման հսկայ հանճարները. սակայն, ինչպէս Բայրօնը, այնպէս էլ էւֆօրիոնը կարճ կեանք է ունենում. նա իջնում է մահուան ձորը և կանչում է իւր մօր Հելենային, որը հետևում է նորան թողնելով Ֆաուստին իւր քօղը միայն: Այսպէս նորա հագուստը, այսինքն յունական արուեստի ձևը ժառանգում են գերման ժողովրդները: Հելենայի քօղը կարելի է նաև յունական հոգու խորհրդանշան համարել, ինչպէս Նիլայի վերարկուն նորա հոգու Բայց կարևորն այստեղ այն է, որ ես յատուկ պիտի շեշտեմ, որ Ֆաուստը յոյն արուեստի օգնութեամբ ամեն տգեղութիւնից խորշելով դէպի մի վեհ աշխարհ ձգտէր. և մենք յիրաւի տեսնում ենք, որ Ֆաուստը ապագայում աւելի գտուած է հանդէս գալիս:

Չորրորդ գործողութեան մէջ Ֆաուստը Յունաստանից նորից դէպի միջնադարեան Գերմանիա է փոխադրւում, նա գտնում է իրեն մի լուստտ երկրում, որի ստորոտներում Գերմանիոյ կայսրը կոխ է մղում իւր ապստամբ հպատակների դէմ: Մեֆիստօֆելը կանգնած է Ֆաուստի կողքին և, ինչպէս փորձիչն անապատում, ցոյց է տալիս նորան. աշխարհի հարստութիւնը և փորձում այդպիսով նորա մէջ անվայել հակումներ սնուցանել. նա հրաւիրում է նուիրել իրեն յղփացած կեանքի, այդպիսով կամենալով նորա վեհ ձգտումները խափանել. բայց Ֆաուստը, որը աշխարհը բաւական ճանաչել ու վայելել էր, որի հսկայ կրքերը Հելենայի հետ միացումից յետոյ մեղմացել և մաքրուել էին, չի կամենում իւր կեանքի վերջին տարիները շուայտութեամբ անցկացնել. նա ժամանակ եկած է համարում մարդկութեան մի օգտակար անդամ դառնալու, որ այնչափ հաճոյք էր պատրաստել իրան, մի ուժեղ բարոյական գործունէութիւն սկսելու: Տիտան Ֆաուստը, որը իւր երիտասարդի յատուկ եսական ոյժերի մղումով մի հարուածով երկնքի և երկրի գաղանիքները լուծել էր կամենում, մեղմացած և մաքրուած Հելենայի աստուածային գեղեցկութեամբ իւր փրկութիւնը մարդկային սեռի բարձրացման մէջ է փնտռում. անհատը ընդ. մարդկութեան հետ կարող է փրկուել: Եւ նա կայսեր օգնելուց և իւր օգնութեանը իբր վարձատրութիւն մի նահանգ ծովի ափին ստանալուց յետոյ, սկիզբ է դնում իւր մարդասէր և բարոյական գործունէութեանը. նա ուզում է բնութեան տարեբեր յաղթահարել և ամեն միջոց գործ դնել, որ

իւր իշխանութեան գաւառներում գոնէ մարդկային սեռը ապահով ապրել կարողանար: Բայց Ֆաուստը ցաւ ի սիրտ տեսնում է, որ իւր այս մաքուր գործունէութեան մէջն անգամ ստիպուած է Մեֆիստոյի գործակցութիւնը խնդրել, նա տեսնում է, որ մի բարի իշխանի բարի կամքն անգամ առանց բռնութեան առաջ տանել չի կարելի: Ֆաուստի իշխանութեան շահերը պահանջում էին, որ Բաուցիս և Ֆիլեմոնը իրենց տան տեղը փոխեն: Ֆաուստը իւր սեփական հողերից մի մասը առաջարկում է այդ ընտանիքին նրանց տան փոխարէն, որի գետինը իշխանութիւնն աւելի յարմար նպատակի պիտի ծառայեցնէր, բայց ի զուր. նորա չեն համաձայնում. խաւարամիտ կամ յետամնաց տարրերը մի պետութեան մէջ արգելք են հանդիսանում քաղաքակրթութեան յառաջդիմութեանը. այդ է պատճառը, որ քաղաքակրթութիւնը զոհեր է պահանջում. այդ տարրերը պիտի ճակատագրօրէն շարդ ու փշուր լինին պետութեան շահերի առաջ և Ֆաուստը ստիպում է Մեֆիստոյին ուղարկել բռնի պահանջելու, որ Բաուցիսն ու Ֆիլեմոնը թողնեն իրենց բնակավայրը, բայց ի դժուր, մտավախ ոյժերը պետութեան մէջ ամեն մի գրութիւն անաստուածութիւն կամ դաւաճանութիւն են համարում, և Ֆաուստն ստիպուած է հրաման տալ հրդեհել նրանց տունը, որի ժամանակ տան տէրերն էլ են այրում, նրանց հետ էլ մի պատահական հիւր: Այն դառն իրականութիւնը, որ բարի կամքը միայն բաւական չէ մարդիկ բախտաւոր դարձնելու, վշտացնում է Ֆաուստին. նա ստիպուած է կամայ թէ ակամայ իւր բարոյական գործունէութեան մէջ չար ոգու Մեֆիստոյի գործակցութիւնը խնդրել: Նա մտատանջում է, ոչ թէ նորա համար, որ չարի գործակցութիւնը իրեն յաւիտենական կեանքից պիտի զրկի, բնաւ երբէք, նա միւս աշխարհի մասին չի մտածում, այլ նորա համար, որ վախենում է, չլինի թէ իր այրական ոյժերը իրեն թողնեն և այլ ևս չկարողանայ իւր սոցիալ-էւզիմոնիստական ծրագիրները իրագործել: Նա գիտէ, որ մարդ այս երկրագնդիս վրայ պիտի կանգնի և իւր շուրջ նայի, գործի մարդու առաջ այս աշխարհը համր չի մնայ. և յիրաւի, մինչև անգամ այն ժամանակը, երբ նա կուրացել է իւր ծերութեան պատճառով, չի մտածում գերեզմանի և գերեզմանից այնկողմ գտնուող աշխարհի մասին, այլ գոչում է մօտաւորապէս. վեր կացէք, մշակներ, մէկ միւսի յետևից և տեսէք թէ ի՞նչ բաներ եմ ծրագրել. գործիքները վերցրէք և աշխատէք իրականացնել. և կամ նա դառնում է զէպի Մեֆիստոն. կարելի եղածին չափ մշակներ ճարիր անթիւ, անհստար,

մղիր դէպի գործ ըննի կամ սիրով: Նորա վերջին բաղձանքն է իւր երկիրը և բնակիչները երջանիկ դարձնել. մի ճահիճ փողած է լեռների ստորոտում և վարակում է երկիրը զանազան հիւանդութիւններով. նա կամենում է ջրանցքներ բանալ և ճահիճը ցամքեցնել. ազատ հողի վրայ ազատ ժողովրդի հետ ապրել. այս է նորա վերջին նպատակը, նորա իդեալը: Այս վեհ գաղափարներով տոգորուած ծերունի Ֆառուսը մեռնում է, և նորա դիակի վրայ մի կռիւ է սկսուում: Սատանայ Մեֆիստոֆելը իւր փորձակիցներով կուում է հրեշտակների հետ Ֆառուսի հոգուն տիրանալու համար, բայց յաղթութիւնը մնում է հրեշտակների կողմը և Ֆառուսը փրկուում է, հրեշտակների և սրբերի բարեխօսութեամբ մօտենում է Աստուածութեան:

Մենք մեզ խնդիր էինք դարձրել հետեւի Ֆառուսին այն ճանապարհում, որով նա դէպի կատարելութիւնը դիմեց, այժմ կարող են յետահայեաց ակնարկով կարճառօտ այսպէս բնորոշել. Միջնադարեան կաթոլիկ Ֆառուսը նուիրելով իրեն գիտութեան՝ քանդում է իւր հաւատքի հիմքերը. գիտութիւնը նորան անբաւական է թւում, նա մոլորում է կեանքի ծովում և ձգում է հնարաւոր եղածին չափ բազմակողմանի փորձառութիւն ձեռք բերել, փորձառութիւնը առաջնորդում է նորան դէպի բնութեան և հին աշխարհի արուեստի մէջ գտնուող գեղեցիկը. յարուցանում է նորա մէջ սէր, իսկ գեղեցիկ սէրը մղում է նորան դէպի բարոյական գործունէութիւնը հասարակութեանը մէջ, որովհետև ինչ որ գեղեցիկ է, է միւսնոյն ժամանակ մաքուր և ճշմարիտ. ճշմարիտ սէրը ստիպում է եսական Ֆառուսին մարդասէր դառնալու, այս է նորա կատարելութիւնը:

Մենք պէտք չունինք այստեղ հարց տալու թէ այդպիսի զարգացման ընթացքը հնարաւոր է. թէ միայն փորձառութիւնը դէպի իսկական գեղեցիկի ըմբռնումը առաջնորդում է, ինչ որ շատ կասկածելի է. բայց մենք կարող ենք այստեղ հարցնել, թէ Ֆառուսի փրկութիւնը ինչպէս է մտածուած և ինչպէս է հնարաւոր:

Մեր ուշադրութիւնը գրաւում է այն հանգամանքը, որ Ֆառուսը, որը սկզբից մինչև վերջ զգուանքով է նայում կրօնական վերացական աշխարհայեցողութիւններին, նա, որը մինչև ուղն ու ծուծ իմասնեմտ մտածող և գործող է, որ պինդ երկրին է կպել և ոչինչ չի ուզում երկնքի մասին լսել և յիմարութիւն է համարում գերեզմանից այն կողմի մասին մտածել, յանկարծ տեսնում ենք նորան փրկուած քրիստոնէական մտքով, միջնա-

գարեան հաւատալիքների համաձայն: Հրեշտակները մի խումբ աւետում է Ֆաուստի փրկութիւնը, որից իմանում ենք, որ Ֆաուստը ազատում է շարի իշխանութիւնից, որովհետեւ նա միշտ վերն է ձգտել և աստուածային սէրը նորան գթալով անմահութեան մէջ է փոխադրում: Այս տեսարանը վկայում է, որ Գէօթէն գնահատել է քրիստոնէական կրօնի վեհութիւնը, բայց պէտք է ասել, որ այս տեսարանը Ֆաուստի ամբողջութեան մէջ անհասկանալի է: Քրիստոնէական հայեցակէտով կարող է յիշուի Աստուծո հայրական սէրը մի շատ խղճուկ արարածի էլ փրկել: Բայց միայն այն ժամանակ, երբ նա զգալով իւր անօգնական դրութիւնը աստուածային գթութիւնն ու ողորմութիւնն է հայցում: Ինչ Ֆաուստը սկզբից մինչև վերջ հպարտ, վստահ իւր ոյժերի վրայ, երկրին է կպած, չի ուղում տիեզերքում մի ամենակարող գթառատ հօր գոյութիւնը ճանաչել: Բայց և այնպէս փրկւում է. ահա այս հակասութիւնը խիստ աչքի է ընկնում:

Աւելի հետևողական կլինէր, եթէ Ֆաուստը մեռնէր իբրև հերոս, այն ուժեղ գիտակցութեամբ, թէ ինքը չէ ընկճուել, թէ Մեֆիստոֆելը իրեն չի կարողացել յաղթել, եթէ ինքը վերջապէս ուղիղ ճանապարհ գտել է. բայց եթէ Գէօթէն իւր Ֆաուստին այսպիսի մի յաղթական վերջ է գուշակում, այդ ապացուցանում է, որ ինքը ծերացած Գէօթէն էլ մի այդպիսի մխիթարութեան և յոյսի կարօտ էր:

Միւս կողմից կարելի է այստեղ նկատել, որ ոչ Ֆաուստի վերջին գործունէութիւնը և ոչ նորա բարոյական իրէպլ կարող են վերջին կատարելութիւնը համարուել: Մենք տեսանք, որ նորա գործունէութեան վերջին նպատակը և նորա իրեալը սոցիալ-էւղիժոնիստական է: Մարդկային սեռի բարօրութիւնը, երջանկութիւնը այս էր նորա նպատակը և զէպի այդ էլի ուղղած նորա բոլոր ձգտումները: Մի բոպէ ենթադրենք, որ մարդկութիւնը կատարեալ երջանիկ է, յետոյ. սոցիալ էւղիժոնիստները բարոյականութիւնն էլ այստեղ պիտի կանգ առնի. բարոյականութիւնը իւր նպատակին հասել է. միւս կողմից հասարակութեան բարօրութիւնը յենում է անհատի երջանկութեան վերայ. մարդը ձգտում է զէպի հասարակաց երջանկութիւնը, որովհետեւ նկատում է, որ նորա երջանկութիւնը իրենն էլ է: Ֆաուստը պիտի իմանար, որ մարդու բարոյական գործունէութիւնը և նորա պարտքի գիտակցութիւնն ու սրբութիւնը կախուած չեն հասարակութեան երջանկութիւնից և առհասարակ և ոչ մի բանից. պարտքի սրբութիւնը անպայ-

ման է, մարդը պէտք է բարիք գործէ, որովհետև դա բարի է։ Այս գիտակցութիւնը դարձնում է մարդուն անկախ իւր շրջապատից և ամբողջ տիեզերքից և կապում է մի անսահման սուրբ կամքի հետ, որին մենք Աստուած ենք անուանում։ Իրաւ է, այս բարոյական տեսութիւնը գործնականի մէջ շատ բացառիկ երևոյթ է, իսկ Գէօթէն ամենից աւելի գործնական կեանքն էր ճանաչում և նորա հերոսը՝ Ֆաուստը գործն էր սիրում քան տեսութիւնը, բայց առնուազն նա պիտի ճանաչէր այս տեսութեան վեհութիւնը և նորա իրականացնելը իւր իղէալը համարէր։ Հազար իննհարիւր և աւելի տարիներ առաջ Յիսուս Հրէաստանում այս բարոյականի վեհութիւնը ճանաչեց և նորա նպատակն էր այս վեհութիւնը իրականութիւն դարձնել։ աշխարհը չհասկացաւ նորան, խելագար համարեց և խաչեց, բայց ճշմարտութեան մի փոքրիկ կայծով բռնկուած մարդկութեան սիրտը այս անարդարութեան համար ցաւեց և վկայեց, որ այդ Մէկը այս աշխարհից չէր. նա միայն կարող է առաջնորդ լինել դէպի մարդկութեան կատարելութիւնն ու փրկութիւնը։

Մ. ԽՈՍՏԻԿԵԱՆ.

Մարբուրդ.